ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2014 թվականի N 435-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 56.1-րդ հոդվածի, <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության 2014 թվականի օգոստոսի 5-ի թիվ 04 ակտը՝ **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականության հողամասի օտարման կարգը խախտելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղական համայրի ղեկավար ***Մխիթար Դանիելյանին*** նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհինգապատիկի չափով:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ ***Լևոն Պետրոսյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի դեկտեմբերի 17
ք. Հրազդան